

14.06.2021թ.

ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 023295/05
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 14.06.2021 թվականի թիվ _____ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ _____ վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Անհատ ձեռնարկատեր՝ Զիրավարդ Տոնոյանը (ՀՎՀՀ՝ 25324274, հասցե՝ ՀՀ ք. Երևան Գալշոյան 26/3) ՀՀ Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020 թվականի ֆիզիկական անձանց եկամուտների և եկամտային հարկի մասին տեղեկությունները, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170⁶ հոդվածի 1-ին մասով:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների ուսումնասիրությունից պարզվել է, որ Զիրավարդ Տոնոյանի կողմից 2020 թվականի ֆիզիկական անձանց եկամուտների և եկամտային հարկի մասին տեղեկությունները 14.06.2021 թվականի դրությամբ չի ներկայացվել:

Գործի քննության ընթացքում հայտնի է դարձել, որ անհատ ձեռնարկատեր՝ Զիրավարդ Տոնոյանը չի ներկայացրել նաև 2020թ անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի սոցիալական վճարի հաշվարկը:

Զիրավարդ Տոնոյանը վերջին մեկ տարվա ընթացքում կատարել է վարչական իրավախախտում, որի համար ենթարկվել է վարչական տույժի (02.06.2020թ-ի թիվ 421547/05 որոշում), ինչը սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ, 244², 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170⁶ հոդվածի 1-ին մասի՝ Զիրավարդ Տոնոյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 (քսան հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



ՎԱՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին իր ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ծանուցելու օրվանից հետո երեսուս օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին.

900005240487՝ վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:

Տուգանք ընշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը _____